Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-028-26.02.2019,15.04.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով.

«17) ստանալ նույնականացման քարտ՝ «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 4-րդ մասում «իրավունք ունի» բառերից հետո լրացնել «ամսվա ընթացքում» բառերը, իսկ «երեսնապատիկի» բառը փոխարինել «վաթսունապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում «անվտանգությունն» բառը փոխարինել «անվտանգությունը կամ մերձավոր ազգականների հետ կապն» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում «երեսնապատիկի» բառը փոխարինել «վաթսունապատիկի» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) առաջին նախադասությունից «, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի,» բառերը հանել.

2) վերջին նախադասությունում «Հաշմանդամ կամ ուղղիչ հիմնարկին կից մանկատանը» բառերը փոխարինել «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասից «Համատեղ բնակվելու իրավունքով և» բառերը հանել:

Հոդված 8. Օրենսգրքի 95-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1. Բուժական ուղղիչ հիմնարկում կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական այլ հաստատություններում ստացիոնար պայմաններում բուժում ստացող դատապարտյալների նկատմամբ նշանակված պատժախուց տեղափոխելու տույժի միջոցի կիրառումը հետաձգվում է մինչև բուժման ավարտը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» ենթակետով.

«ե) ցմահ ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո:».

2) 2-րդ կետի «դ» ենթակետում «քսանհինգ» բառը փոխարինել «տասնութ» բառով.

3) 3-րդ կետի «բ» ենթակետում «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով:

Հոդված 10. Օրենսգրքի 108-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ցմահ ազատազրկման դատապարտված անձի խնդրանքով կամ նրա կամ նրա խցակիցների անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում, քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ, դատապարտյալը կարող է տեղափոխվել մենախուց: Տվյալ դատապարտյալի աշխատանքը կազմակերպվում է՝ հաշվի առնելով դատապարտյալին խցում պահելու՝ ներքին կանոնակարգով սահմանված պահանջները:»:

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Կ-028-26.02.2019,15.04.2019-ՊԻ-011, Կ-028[1]-26.02.2019,15.04.2019-ՊԻ-011 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-028-26.02.2019,15.04.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով.

«17) ստանալ նույնականացման քարտ՝ «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 4-րդ մասում «իրավունք ունի» բառերից հետո լրացնել «ամսվա ընթացքում» բառերը, իսկ «երեսնապատիկի» բառը փոխարինել «վաթսունապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասում «անվտանգությունն» բառը փոխարինել «անվտանգությունը կամ մերձավոր ազգականների հետ կապն» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասում «երեսնապատիկի» բառը փոխարինել «վաթսունապատիկի» բառով:

Հոդված 6. Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) առաջին նախադասությունից «, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի,» բառերը հանել.

2) վերջին նախադասությունում «Հաշմանդամ կամ ուղղիչ հիմնարկին կից մանկատանը» բառերը փոխարինել «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասից «Համատեղ բնակվելու իրավունքով և» բառերը հանել:

Հոդված ~~7~~8. Օրենսգրքի 95-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1. Բուժական ուղղիչ հիմնարկում կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական այլ հաստատություններում ստացիոնար պայմաններում բուժում ստացող դատապարտյալների նկատմամբ նշանակված պատժախուց տեղափոխելու տույժի միջոցի կիրառումը հետաձգվում է մինչև բուժման ավարտը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» ենթակետով.

«ե) ցմահ ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո:».

2) 2-րդ կետի «դ» ենթակետում «քսանհինգ» բառը փոխարինել «տասնութ» բառով.

3) 3-րդ կետի «բ» ենթակետում «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով:

Հոդված ~~8~~10. Օրենսգրքի 108-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ցմահ ազատազրկման դատապարտված անձի խնդրանքով կամ նրա կամ նրա խցակիցների անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում, քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ, դատապարտյալը~~ պահվում է մենախցում~~ կարող է տեղափոխվել մենախուց: Տվյալ դատապարտյալի աշխատանքը կազմակերպվում է՝ հաշվի առնելով դատապարտյալին խցում պահելու՝ ներքին կանոնակարգով սահմանված պահանջները:»:

2) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~9~~11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ Կ-028-26.02.2019,15.04.2019-ՊԻ-011, Կ-028[1]-26.02.2019,15.04.2019-ՊԻ-011, Կ-028[2]-26.02.2019-ՊԻ-011 օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	**ՀՀ Կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ),	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել նոր՝ 7-րդ հոդվածով՝ վերահամարակալելով նշված նախագծի մյուս հոդվածները: Լրացվող հոդվածով	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագիծը լրացվել է նոր՝ 7-րդ հոդվածով: Միաժամանակ, Նախագծի մյուս հոդվածները վերահամարակալվել են: Նախագծում լրացվող 7-րդ հոդվածին համահունչ՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց	Ընդունվել է:

		«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	առաջարկվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասից հանել մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցության տրամադրման հիմքում համատեղ բնակվելու իրավունքի պահանջը: Նշված առաջարկի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ գործող իրավակարգավորման տառացի մեկնաբանության համաձայն՝ դատապարտյալին երկարատև տեսակցություն տրամադրվում է միայն նրա հետ համատեղ բնակվող (մինչև դատապարտվելը բնակված) մերձավոր ազգականների հետ, ինչն արդարացված չէ և սահմանափակում է նրանց իրավունքները, ինչպես նաև չի նպաստում դատապարտյալի՝ արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի լիարժեք իրացմանը: Ըստ այդմ՝ առաջարկվում է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի	պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 13-րդ պարբերությունից «համատեղ բնակվելու իրավունքով» բառերը հանվել են:	

			Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը համապատասխանեցնել առաջարկվող կարգավորմանը՝ միասնականացնելով գործածվող ձևակերպումները:		
2		Նախագիծ	Առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր՝ 9-րդ հոդվածով: Նշված հոդվածով առաջարկվում է **փոփոխել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց մեկուսացվածության խիստ աստիճանն ունեցող հիմնարկից մեկուսացվածության ավելի մեղմ աստիճանն ունեցող հիմնարկ տեղափոխելու առնչությամբ օրենսդրությամբ նախատեսված ժամկետները՝ դրան զուգահեռ ցմահ ազատազրկման դատապարտված անձին հնարավորություն տալով**	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է. Նախագիծը լրացվել է նոր՝ 9-րդ հոդվածով. **«Հոդված 9.** Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» ենթակետով. «ե) ցմահ ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո:». 2) 2-րդ կետի «դ» ենթակետում «քսանհինգ» բառը փոխարինել «տասնութ» բառով.	Ընդունվել է:

			պատիժը կրել բաց ուղղիչ հիմնարկում: **Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** 1) ցմահ ազատազրկման դատապարտված և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը կարող է տեղափոխվել կիսափակ ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո. 2) ցմահ ազատազրկման դատապարտված և կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը կարող է տեղափոխվել կիսաբաց ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն քսանհինգ տարին կրելուց հետո: Գործող օրենսդրությանը համապատասխան՝ **ցմահ ազատազրկման դատապարտված անձը պատիժը կարող է կրել առավելագույնը կիսաբաց**	3) 3-րդ կետի «բ» ենթակետում «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով:»: Միաժամանակ, Նախագծի մյուս հոդվածները վերահամարակալվել են:	

			ուղղիչ հիմնարկում՝ հնարավորություն չունենալով հասնել բաց ուղղիչ հիմնարկ. բաց ուղղիչ հիմնարկը, որն ազատազրկման ձևով պատիժ կրելու համար նախատեսված ուղղիչ հիմնարկ է, և, ըստ էության, տեղաբաշխվելով այդ ուղղիչ հիմնարկում՝ ազատազրկման դատապարտված անձը շարունակում է պատիժ կրել, գործող իրավակարգավորումների պարագայում անհասանելի է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար: **Նման մոտեցումը նախևառաջ հակասում է միջազգային իրավաբանության մեջ ընդունված՝ խտրական վերաբերմունքի արգելքի սկզբունքին: Ավելին,** Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի		

			կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (ԽԿԿ) 2015 թվականին Հայաստան կատարած այցելության ընթացքում ևս մեկ անգամ վերահաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ Հայաստանը պետք է երաշխավորի ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի կիրառումը և բացառի հակառակ պրակտիկան՝ հաշվի առնելով այն, որ միայն պատժատեսակով պայմանավորված՝ ցմահ ազատազրկված դատապարտյալները ավելի վտանգավոր չեն, քան մյուս դատապարտյալները: **Այս համատեքստում անդրադառնալով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտին՝ հարկ է նշել, որ** ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի		

			համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, **եթե դատապարտյալը փաստացի կրել է ցմահ ազատազրկման դեպքում՝ ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին.** պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը փաստացի և իրավական առումով անձին թեև պայմանական, բայց ազատում է պատիժը կրելուց և տվյալ դեպքում օրենսդիրը, որպես պատժի նպատակների իրականացմանը հասնելու նվազագույն հնարավոր ժամկետ, ցմահ ազատազրկման դատապարտված անձի համար նախատեսել է քսան տարին: **Ստեղծվում է մի իրավիճակ, երբ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու ենթակա դատապարտյալը չունի հնարավորություն պատիժ կրել մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ**		

			հիմնարկում, ինչպիսին է բաց ուղղիչ հիմնարկը, սակայն կարող է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել: Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով ցմահ ազատազրկման դատապարտված անձանց վերասոցիալականացման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու կարևորությունից՝ առաջարկվում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու համար նախատեսել, որ՝ **1) ցմահ ազատազրկման դատապարտված և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը կարող է տեղափոխվել կիսափակ ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն տասնհինգ տարին կրելուց հետո.** **2) ցմահ ազատազրկման դատապարտված և կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը**		

			կրող դատապարտյալը կարող է տեղափոխվել կիսաբաց ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն տասնութ տարին կրելուց հետո. **3) ցմահ ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը կարող է տեղափոխվել բաց ուղղիչ հիմնարկ նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո:**		
3		Նախագծի հոդված 8	Նախագծի նշված հոդվածում «պահվում է» բառերը փոխարինել «կարող է պահվել» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա կարգավորման պահպանման պայմաններում ցմահ ազատազրկման դատապարտված անձի խնդրանքի դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, առանց հաշվի առնելու և գնահատելու ցմահ ազատազրկման	Առաջարկությունն ընդունվել է մասնակի. Նախագծի նշված հոդվածում (վերահամարակալվել է որպես 10-րդ հոդված) «պահվում է մենախցում» բառերը փոխարինվել են «կարող է տեղափոխվել մենախուց» բառերով:	Ընդունվել է մասնակի:

			դատապարտված անձին մենախուց տեղափոխելու անհրաժեշտությունը, **պարտավոր է** նրան տեղափոխել մենախուց, ինչն արդարացված չէ և խաթարում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանցից անջատ պահելու կանոնի վերացման հիմքում ընկած գաղափարախոսության կենսագործումը:		